

Նկարագրած սովորութիւններէց, որոնք ունին ազգային հասարակաց կեանքի մէջ պատմական խորութիւն չատերը աննկատելի կերպով արդէն մոռացուել են. ոմանք սակաւ առ սակաւ մոռացուած են կեանքի նոր հոսանքի ազդեցութեան տակ, ուրեմն մոռացուածը կարող է պահել միայն դրականութիւնը:

ՏՕՆԵՐ

ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՆԴԵԱՆ ՏՕՆԸ



այլոց կեանքում Քրիստոսի ծնունդն և մկրտութիւնն ունին ամենաարագան նշանակութիւն: Այդ տէրունական տօնը կատարուած է ամենայն ջերմեւանդութեամբ, և նորան մասնակցում են անխտիր և՛ մեծը և՛ փոքրը, և՛ գրագէտը և՛ անգրագէտը, հովիւն ու քահանան և այլն:

Ո՞ւր չէ յայտնի արդեօք, որ Յունվարի 5-ին, թաթախման երեկոյին, տիրացուները ժամաշապիկ հագած երկերկու, երեք երեք, երբեմն և քահանայք, քաղաքներում պտտում են ծանօթ և անծանօթ տները «Այսօր տօն է» երգում ու վարձատրում: Կար ժամանակ, որ Ղակախի զաւառում երկերկու տիրացուներ, ժամաշապիկ հագած, խուրջինը ձգած մի խոնարհ իշու վրայ, մի աւելի խոնարհ իշապան առաջ ձգած պտտում էին մի երկու շաբաթով, գիւղից գիւղ, տնից տուն և «Այսօր տօն է» երգելով՝ ժողովում էին ալիւր, ցորեն, զարի և այլն:

Քրիստոսի ծննդեան առթիւ հայ ժողովրդի բանաստեղծական ոգին յօրինել է զանազան տեղերում ժողովրդական անպաճոց երգեր:

Ծննդեան երեկոյին պատանիները խումբ խումբ պտտում են գիւղի տները և այն կարգով, որ նոցանից ներս է մտնում տուն մինը կամ երկուսը, իսկ մնացեալ խումբը բարձրանում է տան տանիքը և փոքրիկ ծակից կախում թռկով կամ զօտիկներով տոպրակ (Ղազախ, Աշտարակ՝ և այլն) կամ գուլպայ (Չարուր) կամ թիւց (սալա) մէջը վառ ճրագ (Դարալեագաղի խաչիկ գիւղում) և խմբից մինը երգում է հետևեալը.

Ոգտաբակ եւ Երզնկայ գիւղերում

Ալելուեա, ալելուեա
 եւ ցնձացէք, ուրախացէք,
 Մեր Մարիամի պսն բացէք,
 Մարիամ գնաց լեռն ի ծնունդ,
 Ծննդեցաւ, ազատուեցաւ,
 Հրէս եկաւ մի ձիաւոր,
 Լախտը ձեռին բող ձիաւոր,
 Աջու ձեռին աւետարան,
 Ձախու ձեռին սաղմոսարան,
 Չինի, չինի, ձեր տղեքանց անունն ինչ ա.

Տան բնակիչներէց մինը յայտնում է գերդաստանի ամե-
 նափոքրի անունը, որից յետոյ երգիկիցը նորից շարունակում է.

«Արուսեակին» ու «Արմայիսին» բաղդը հանենք,
 Աջու ձեռը ջէքը տանենք,
 Դուշմանի աչքը հանի,
 Տասը շահին չարը տանի:

Վանայք դնում են տոպոսկի, դուլպայի կամ քթոցի մէջ
 մրգեղէն. քարցրեղէն, փլաւ կամ ալլ չոր կերակուր: Զուարճու-
 թեան համար եղբեմն դնում են կատու:

Վաղարշապատում

Հրէս եկաւ մի ձիաւոր
 Լախտը ձեռին բող ձիաւոր
 Աջու ձեռին աւետարան,
 Ձախու ձեռին սաղմոսարան.

Չինի, չինի, ձեր տղեքանց անունն ինչ ա.

«Արշաւիրը» նստի թաղտը,

Ձեռը տանի ջիւրը.

Մի բուռն ոսկի հանի,

Ձարը տանի, բարին բերի:

Ղ ա զ ա իս

Ալելուեա, ալելուեա

Աշէն, աշէն էս տնաշէն

Սեղան քաշեն էս տնաշէն,

Հրէս իրի մի ձիաւոր,
 Լախտը ձեռին բոզ ձիաւոր,
 Աջու ձեռին աւետարան,
 Ձախու ձեռին սաղմոսարան,
 Ըստով գրեց, ընդով ջնջեց,
 Քոռն ու քաջալ սրղըրընց,
 Ուազ մոնթին կաշաութեցին,
 Դրա Մարիամ ուղարկեցին,
 Մարիամն իրի լալով, լալով,
 Լալ մի, լալ մի ճըճկեօհալով,
 Որ ոտ փոխէր արքն հաղէր,
 Փունջ մանիշակ ետնէն հաղէր,
 Հրէս իրի իրիցընին,
 Իրար իղուս գեանգիշ անին
 Կաթնաղբիւրը փըլքըցըրին,
 Օրհնել Աստուած կեարուսքացաւ,
 Էրգեան կիւթան մեզնուեցաւ,
 Քուխտ օրօրոց օրօրուեցաւ,
 Տընըշէն, տընըշէն, ձեր փստըկի անունն ինչ ա:

«Գուրգէն» ու «Տիգրան»

Յօրը տաշ, մօրը տաշ,

Ծաղկեն ծլեն,

Ձեռը ջիրը տանեն,

Ձալ արասին հանեն,

Ձարը տանի մի թունդի շինի

Մի գթալ եղ, երկու ձու,

Երկու ձուկը մի ջրամ ալիր,

Ով որ էսքան ասածս չ'տայ,

Կաղ գէլը մօրը տանի:

Զարուրի Ուլնիա-Նորաշէն գիւղում, որ զաղթած են Սալ-
 մաստի գաւառից, Դոննդեան երեկոյին երգում են Հեռուեալ եր-
 կու երգերից փոփոխակի միւր կամ միւսը:

Այլը մարեմ, մարեմ, մարեմ,

Ձեր տղաքի սօլը կարեմ,

Փշատ տուէք փորս լարեմ,

Ձամիչ տուէք ատմըներս շարեմ,

Ընդեօզ տուէք գլուխ կօռեմ,

Աստուած ձեր խարսնը փեսան պախի:

Միւս երգը.

Էրնէկ էրնէկ էն տարեցին, ալելիա,
ձինեցին կամարեցին, ալելուիա,
Բարձր բոլորը բերեցին, ալելիա,
Էրնէկ քեզի՝ սուր չէր մսուրք, ալելուիա,
Որ Քրիստոս քեզ մէջ ծնուեցաւ, ալելիա.
Էրնէկ քեզի՝ բրուժ խանձարուժ, ալելիա,
Քրիստոս քեզ մէջ փաթաթեցին, ալելուիա,
Էրնէկ քեզ Խորոմսիմայ, ալելուիա.

Որ Քրիստոսին տատմեր էլար, ալելուիա,
Քրիստոս քեզ մէջ մկրտեցին, ալելուիա.
Էրնէկ քեզի սուրբ Օհանէս, ալելուիա,
Որ Քրիստոսին քաւոր էլար, ալելուիա.
Էրնէկ քեզի, սուրբ Յորդանան, ալելուիա,
Աստուած ձեր խարսնը փեսան պախի
Մեր փայլ տուէք:

Դարալաշեցալի խաչիկ գիւղում, որ բնիկ Հայեր են.

Յնճացէք, ուրախացէք, ալելուիա,
Մեր Մարիամի պասը բացէք, ալելուիա,
Մարիամ գնաց դուռ տաճարին, ալելուիա,
Մէջքն տուեց խաչափայտին, ալելուիա,
Հնչեց բերեց Յիսուս որդին, ալելուիա,
Յրանիք (երանի) քէ, հոռոմսիմա, ալելուիա,
Որ Քրիստոսին տատմէր ըլար, ալելուիա,
Յրանիք քէ, բուրժ խանձեւուն, ալելուիա,
Քրիստոս միջին փաթաթին, ալելուիա,
Յրանիք քէ, գետ Յորդանան, ալելուիա,
Քրիստոս միջին մկրտին, ալելուիա,
Յրանիք քէ, սուրբ Յոհաննէս, ալելուիա,
Քրիստոսին քաւոր էլար, ալելուիա,
Յրանիք քէ բարձր օրորոց, ալելուիա,
Քրիստոսին միջին օրորին, ալելուիա,
Առին չուրադ, առին սղոց, ալելուիա,
Դնացին ծառնի խնկան, ալելուիա,
Յուրազ տուին, ծառնի ճչաց, ալելուիա,
Սղոց քաշին, արիւն բխաց, ալելուիա.
Ձեր տղի անունն ի՞նչ ա.
«Թուրէն» ու «Պարուր» ճուժեր ճուժացաւ, ալելուիա.
Բանց բարդի ծառ, էրկենացաւ, ալելուիա.

Ճիւղքեր գցեց քաղքէ քաղաք, ալելուիա,
 Ամէն ճղքին ջուղտմ ճրագ, ալելուիա,
 Մեր փայլ տուէք ինչ կամենաք:

Ղազարիու «Սև քար» գիւղում լիշեալ երգի վերայ աւելացնում են հետևեալը.

Պէնպէնակ,
 Ասծու հալակ ծտենակ,
 Ընկերս ընկաւ ծովը.
 Ծովը դառաւ ծիրանի,
 Մագէն իրի կըռքկտուց,
 Հաւը թռցրուց,
 Ջուխտը ո... պրցրուց:

Սուրբ Էջմիածնի շրջակայ գիւղորայքում ընդունում են, որ Յունուարի 5-ին, Ծննդեան նախընթաց երեկոյին դետերի, առուների և միւս հոսող ջրերը միաժամանակ կանգ են առնում մի վայրկեան տևողութեամբ: Եթէ կարողանաք իմանալ այդ վայրկեանը և հոսող ջրի մէջ դնէք մի իր, օրինակ սափոր և, հէնց այդ ջուրը կանգնելու վայրկենին ասէք. «Սափորը ոսկի դառնայ»՝ նա իսկոյն ոսկի կը դառնայ:

Չիրակայ գիւղերում տղայքը փայտեայ կժերով, որ նորանցում կոչւում է «քիւլակ», «քուղայ», գետից ջուր են բերում տուն այն յուսով, որ ջուրն էլ, ամանն էլ ոսկի դառնան:

Դարալաղեազցիք ընդունում են, որ այդ գիշերը կանգ են առնում ոչ միայն ջրերը, այլ և բոլոր առարկաները, քամի, օդ, ծառ, քար, խոտ և այլն: Սոքա ևս ընդունում են որ առարկաները ջրի մէջ ոսկի են դառնում, միայն ոչ թէ Ծննդեան, այլ Համբարձման երեկոյին, երբ երկու աստղ՝ Լէյլին և Մէջլումը երկնքումը իրար կըհամբուրեն: Բասենումը նոյնպէս ընդունում են ջրի կանգնումը, սակայն նորանց կարծիքով այս իրողութիւնը կատարւում է կաղանդի գիշերը՝ դեկտեմբերի վերջին գիշերը:

Բասենում համոզուած են, որ եթէ մանուկը ծնուի Ծննդեան երեկոյին կամ Զատիկի խթման կամ թաթախման երեկոյին, որ սեռի և լինի նա, եթէ նորա ձեռի եղնկին քսեն

նոր մորթած սև հաւի արիւն՝ այդ մանուկը կը դառնայ եղունկով
հմայող:

Վերջապէս Ծննդեան այդ անհանգիստ երեկոն անցնում է
և հետեւեալ օրը կատարւում է Քրիստոսի սուրբ մկրտութեան
հանդէսը:

Ղազարիւմ Ջրօրհնեաց հանգիստում, երբ երգւում է «Առա-
քելոյ աղանոյց և քահանան սուրբ մեռօնը կաթացնում է
ջրի մէջ, ամեն սեռի ու հասակի բնակիչք իրարից առաջ
կտրուկ սնելով աշխատում են ամաններով ջուր վերցնել և
տանելով տուն՝ ածում են մի փոքր խաշի՝ այսինքն թթու-
խմորի մէջ, մի փոքր ալիւրի մշտական ամանի մէջ, մի փոքր
խմորի տաշտի մէջ և մնացածը շաղախում են մօխի ճեւտ և
դնդակ շինելով պահում են, որ հարկաւոր ժամանակ նորանով
սրբադոճեն այն ամանները, որոնց պատահամբ զիպել և
հարամել է շունը կամ մուկը:

Զիրակում և սուրբ Էջմիածնի շրջակայ գիւղերում Ծննդե-
ան տնօրհնութեան ժամանակ, երբ քահանան ընթեռնում է
աւետարանը, տան կանայք թթուխմորը լուր ամանով բերում
դնում են նորա առաջ, որ վրան աւետարան կարդացուելով
հոյի առատութիւնը անպակաս լինի:

Ս. ՍՈՐԳԻՍ ԶՕՐՈՎԱՐԻ ՏՕՆԸ.

Ղազար, Զիրակ, Վաղարշապատ, Դարալաղեաղ և այլ տե-
ղեր Սուրբ Սարգսի պատի ուրբաթ՝ երեկոյին պաղ ջրով փո-
խինդ են շաղախում և նորանով թաթախւում: Փոխինդը (Ղա-
զարիւմ փոխինձ), ինչպէս յայտնի է, լինում է բոված և եր-
կանքով աղացած ցորենի ալիւրը: Այդ երեկոյին փոխինդի ա-
լիւրը դնում են Աշտարակ՝ աստղերի տակը, Զիրակում՝ դուռը
բաց տան մէջ, իսկ այդ տեղերում տան մէջ կամ եկեղեցում,
որպէս զի գիշերը սուրբ Սարգիսը ձի հեծած զայ և փոխնդի
վրայով անցնի: Անցնելու ժամանակ նորա ձիւն մի ոտը զիպ-
ւում է փոխնդին և սորա վերայ թողնում է պալտի հետքը:

Սուրբ Սարգսի երեկոյին երիտասարդ տղայք և աղջկունք ուտում են աղի հաց և գիշերը ծարաւում են և երազում, որ տղան աղջկան, կամ աղջիկը տղային ջուր տայ խմելու, նա էլ կը լինի նորա ապագայ ամուսինը:

Հարաթ առաւօտ եփում են փոխնդից շփոթանման կեթակուր — խաշիլ — և ուտում են: Մի քանի գաւառներում երիտասարդ տղայք կամ աղջկունք լաւաշի կտորի մէջ փաթթում են խաշիլը և դնում են տան երդիկը, կտորը: Կաջադակը կամ ագռաւը կտցում և փախցնում է խաշիլը և որ տան կողմը նա թռաւ, այն տան տղան կամ աղջիկը կը լինի նորա ամուսինը:

ՏԵՆՈՒՆԴԻՆԵՆԻ ՏՕՆԸ

Տեաւընդառաջ բաւը աղաւաղուած կոչւում է Ղազախում տօռոնջ տօռոնջ, Հին Զուղայում տառինջ տառինջ, Վաղարշապատում դըրընդէզ, Դարալեւազգի բնիկների մէջ՝ դառդառանջ, գաղթականների մէջ՝ տերինտառաջ կամ տանտառէջ:

Հին Զուղայում փշէ դէզը պարտաւոր են պատրաստելու եկեղեցու գաւթում նոյն տարում պսակուած երիտասարդները: Հանդիսակատարութեան ժամանակ նոյն երիտասարդները վառ մոմերը ձեռքում շարքով կանգնում են դէզի առաջ: Երբ քահանան կարգը կատարելով իւր մոմով առաջինը վառում է դէզը, նորանից իսկոյն յետոյ վառում են և նորապսակները, այլ ևս ոչ ոք:

Երիտասարդները վառած մոմերով վերադառնում են տուն, որ պատրաստած կան փոքրիկ դէզեր և այդ մոմերով վառում են նորանց. փոքրիկ դէզերը առանց բացառութեան պէտք է լինին իւրաքանչիւր տան տանիքի վերայ: Վառած դէզի վերայով լոր են տալի, այսինքն ցատկում են: Նորապսակ երիտասարդի բարեկամները բերում են այդ երեկոյին նորահարսի համար տեսակ տեսակ ուտելիքէն, որ կոչւում է խոնջալ: Երեկոյեան արձակում են հրացաններ:

Ղազախի գիւղերում դէզը վառւում է միմիայն եկեղեցու մօտ: Նորա վառելու արտօնութիւնը նոյնպէս տուած է նորա-

պրակ երիտասարդներին, որոնցից յետոյ սակայն՝ կարող է վառել ամեն ոք: Գէղի ծուխի թեքուիլը նշան է այս կամ այն կողմի բերրիութեան: Բոցը վերջանալուց յետոյ սկսում են ցատկի վրայով:

Ապա մի մի կիսալրած փայտ դիզից վերցնում տանում են իւրեանց տները և պահում են ապահով տեղ կամ դնում են հաւերի բներում, որպէս զի հաւերը շատ ձու ածեն ու շուտ թուխսի դան: Մի կտոր էլ դնում են խաշի մէջ, որ հացը աւատ լինի:

Ջիրակում և Բասէնում դէզի վառելու իրաւունքը նոյնպէս տուած է նորապսակներին: Այնտեղ քաւորակինը հարսի համար բերում է խոնջա և հարսին երդիկ է դուրս հանում:

Վաղարշապատ և շրջակայ գիւղերում նորաւարս ունեցող տունը հրաւիրում է աղջկունք և հարսներ դռընդէզի տօնը կատարելու: Քաւորը բռնում է նորապսակ տղայի և սա իւր ամուսնու, նորահարսի, ձեռքը և երեքը միասին երեք անգամ պտտում են իւրեանց բոցավառ դէզի շուրջը և երեք անգամ վրայով ցատկում են:

Ապա հրաւիրուած աղջիկները և հարսները դեղ են քսում սևացնում են աչքի թերթեւունքները և պարահանդէս բանում: Տան նորահարսը պարտաւոր է ինքը աչքադեղը մատուցանել և մինչև անգամ ցանկացողին քսել:

Գէղի վրայով ցատկելը նորա համար է՝ որ ազատունի ամէն տեսակ չլաւից (ոչ լաւ, չար բան): Մի քանի օրուայ ծննդից ազատուած կնոջը նոյնպէս թուցնում են դէզի վրայով՝ որ քառատունքից դուրս գայ և չլաւից ազատուի: Քաւորակինը խոնջա է բերում սանամօր համար և միայն նա ունի իրաւունք նորահարսին դուրս բերելու երդիկ դէզի վերայ:

Դարալագեաղի գաղթական ժողովրդի մէջ, օրինակ Աղատէկ, Մարտիրոս, Կորադիզ, Սէս գիւղերում դէզ վառելու իրաւունքը քահանայից յետոյ յատկացրած է նոյնպէս նորապսակ երիտասարդներին, որոնք, Զուղայեցոց նման, վերադառնում են տուն վառած մոմերով իւրեանց դէզերը վառելու:

Երբ քահանան կարդում է աւետարանի այն տեղը, ուր

Սիմէօն ծերունին ասում է Մարիամին «Լ ընդ քո իսկ անձն անցցէ սուր», իսկոյն իւրաքանչիւր մարդ ծածկարար կտրում է դանակով մոմի կտորը և մօտը պահում, որ *օժը երրէք չը-կծէ նորան*: Նոյն նպատակի համար ամենքը ևս՝ հարս, աղ-ջիկ, կին, տղամարդ, երեխայ, դէզի կրակով այրում են իւ-րեանց շորի որևէ մասը: Իսկ խաչիկ գիւղում այրում են խոն-ջանի ծայրը:

Եթէ որևէ հիւանդ կայ տանը, նորան *երդիկով դուրս են ղերում*՝ տան տանիքը՝ դէզի մօտ, որ լաւանայ: Դէզը վառելու միջոցին հրացաններ են արձակում, որոնց ձայնից շնորը վախենում են և մի կողմի վրայ են փախչում: Փախուստը դէպի որ կողմը կատարուի, այդ տարուայ հողային սուստու-թիւնը այդ կողմից կարելի է սպասել: Նոյն նշանակութիւնն ունի և դէզի ծխի ուղղութիւնը քամու աղղեցութիւնից:

Բարեկամները նորահարսին դուրս են բերում երդիկ, պտտեցնում են դէզի շուրջը և այրում են խոնջանի ծայրը: Վերջապէս խաբոյկից մի կրակ են ձգում տան մէջ *անպատ-ճառ երդիկից*, որով վառում են այդ երեկոյի մօմը, որպէս զի բախտը տան վերայ լինի:

ՄԵՆ ՊԱՍԸ.

Բասենում մեծ պատի առաջին օրը իւրաքանչիւր տան թխում են *եօթը* հատ ալանի բաղարձ ի նշան եօթը շաբա-թի և այդ օրը խաշով հաց չեն ուտում: Երդիքից կախում են թելով մի սոխ, մէջը ցցած եօթը փետուրը. նա կոչւում է *սխեղուծ*: Իւրաքանչիւր շաբաթի վերջը մի փետուրը հանում ձգում են: Փետուրների վերայ դրած մանրիկ քարերը շարժուե-լուց վայր ընկնելով վախեցնում են երեխանց, որ նոքա ճշտու-թեամբ պահեն պատը:

Հաղախում նոյնպէս կախում են սոխը փետուրներ ցցած և անուանում են նորան *պապի պտոր*, որից իւրաքանչիւր շաբաթ մի փետուր ձգում են: Այդ երկրում մեծ պատի առա-ջին օրը ընդունւում է *կրակի* կիւրակի և ով չընդունի նո-

րան, նորա շորերը շուտ շուտ կ'ալըուին. երկրորդ օրը ջրինն է, չգաՀողին ջուրը կըտանի: Երրորդ օրը, մկանն է, մկները կուտեն թեյ, Հաց, շոր և ալլն: Այդ օրը, չորեքշաբթի, կանանցից ու չգնալ եկեղեցի և չլսի առաջին անգամ ասած «Տէր ամենակալը», նա չի կարող ջանքը (ճախարակ) մանել: Չորրորդ օրը, Հինգշաբթի, առաջին գործը պէտք է լինի ճախարակ մանել, որովհետև նորա մէջ միայն կարելի է գտնել րարարեալ, առատութիւն:

Աւելացնեմ այստեղ, որ Ղազախում սովորութիւն է կանանց մէջ, որ ամբողջ տարի չորեքշաբթի և ուրբաթի երեկոյին գործ չպէտք է կատարել, ըստ որում չորեքշաբթի արածը րարարեալ չի ունենալ, իսկ ուրբաթն ունի վատ հետեւանք, կրակին զոհ կգնան շոր, կալք, երեսայ և ալլն:

Ճիրակացիք և Ղարոնցիք մեծ պատի առաջին շաբաթի շաբաթ օրը անուանում են Թալալօսի կիրակի, ու չգաՀի, կթալկանայ, այսինքն նորանց կարծիքով կըցնդի:

Մեծ պատի 24-րդ օրը Հինգշաբթի, իբրև մեծ պատի կէսը, կոչուած է միջինը. Գարալագեաղի բնիկ Հայերի մէջ սովորութիւն կալ, որ մեծ պատի 23-րդ օրը, չորեքշաբթի երեկոյին եկեղեցում շինում են լիժք, այն է լազանի մէջ ածում են ջուր և ձէթ ու եղեգնէ խաչի մէջ պատրոյկը լիժքում վառում են մինչ լոյս: Առաւօտեան լիժքի ջուրը մաս մաս բաժանում են զիւղի բոլոր տների վերայ, ուր այդ ջուրը խառնում են բաղարջ խմորի հետ:

Վաղարշապատի զիւղերում, Հին Ջուղայում, Գարալագեաղի բնիկ և գաղթած Հայերի մէջ այդ օրը թխում են մի մի Հատ մեծ բաղարջ, որ Վաղարշապատում անուանում է միջուկը, Գարալագեաղի բնիկների մէջ՝ միջնաք սղջ, իսկ գաղթածների մէջ՝ կլօծ:

Բաղարջի մէջ դնում են ուլունք կամ դրամ և բաժանում են տան բոլոր անդամների վերայ: Մի քանի տեղ բաժին են Հանում նաև անասուններին, Հողին և ալլն: Ուլունքը կամ դրամը, որ խաչիկ գիւղում կոչուած է դեօլվաթ, ում բաժնի մէջ գուրս գալ, այն տարուայ առատութիւնը նորա զլխին է:

Ջուղայումը Հատատում են, որ բաղարջը կտրելու ժամանակ ուլունքը կամ դրամը ընկնի կտրող դանակի բերանը, որ նոյն է թէ գութանի խոփը, այն ժամանակ նորանց ապրուստը պէտք է սպասել հողից:

Ջիրակցոց և Բասենցոց մէջ ևս գործադրում է բաղարջի մէջ ըսող դնելու սովորութիւնը, սակայն նորանցում բաղարջը թխում են դեկտեմբերի վերջին օրը, իսկ բաժանում են Յուսուրի 4-ին, երեկոյին:

Հիմքը սովորական է նաև Արարատեան գաւառում և Բասենցոց մէջ, նորանում վառում է 40 պատրոյկ, բայց ջուրը չեն բաժանում: Արիտասարդ աղջկունք և տղայք Հաւաքում են այս կամ այն բարեկամի տունը, իւրաքանչիւրը նոցանից ժողովում է 40 մանրիկ քարեր ի լիշատակ 40 մանկանց և մի քարի վերայ 40 անգամ ծունր են կրկնում, ուրեմն 1600 ծունր, որպէս զի 40 մանկանց աղօթքը լինի նորանց վերայ. ծունրի ժամանակ նոքա կրկնում են Հետեւեալը

Քառսուն մանուկ, քառսուն կուս,

Քառսուն մանկան բարեխօս:

Դարալագեաղի զաղթական ժողովրդի մէջ սովորութիւն է որ Գրիգոր Լուսաւորչու օրը (մուտն ի վիրապ) նորահարսի սկեսուրը Հրաւիրում է իւր տուն բարեկամ կ'անանց, Հարսնամօրը և սորա բարեկամ կանանց և զանազան ուտելիղէններ պատրաստելով դնում են կանաչազարդ դաշտը զբօսնելու:

Այդ զբօսանքի անունն է *գնաշտ*: Դորա մասին ասում են Հետեւեալը:

Նարսնբըրը կնացած է գեաշտ,

Ինչ են բերած, ջուխտ ջուխտ լաշ. (տղայ)

Անունբըրը քնչ.

Մէկին զաննակ, մէկին պամբակ⁶.

ԾԱՂԿԱՋԱՐԴ

Ծաղկազարդի տօնը Դարալագեաղի զաղթական ժողովրդի մէջ ունի մեծ նշանակութիւն, մանաւանդ երիտասարդ տղայոց և աղջկերանց Համար, որ ծաղկազարդի առաւօտ,

եկեղեցում, ամեն մի նշանուած աղջիկ իւր փեսացուի ծնողներինց ստանում է զարգարուած մօմ: Իսկ ժամասացութիւնից յետոյ իւրաքանչիւր նորահարս, այսինքն նոյն տարի պսակուած, *առաջի* անգամ ուղղակի եկեղեցուց զնալու է իւր հօր տունը, իւր ծնողաց մօտ: Եթէ մէկը վստահանայ ծաղկազարդից առաջ զնալ, այլպիսին անշուշտ կ'ենթարկուի հասարակաց բամբասանքի:

Վաղարշապատի շրջակայքում հարսի հօրանց տուն զնալու սովորութիւնը երբեմն այնքան խստութեամբ է լինում, որ դժբաղդ դէպքումն անգամ (մահ, ծանր հիւանդութիւն և այլն) նորահարս աղջիկը ստիպուած է լինում գալ հօր տունը՝ միայն դիշերը և նոյն գիշերը վերադառնալ:

Վաղարշապատի շրջակայքում և Ղազախի մի քանի գիւղերում սովորութիւն կար, որ եկեղեցու մէջ, «Փառք ի բարձունս» երգելու միջոցին, պատանի տղայք ածում էին *ժօժայտակ* և *ժնու*:

Ճօճանակը ձեռքի թաթի չափ, կոթով մի տախտակ է, որի երկու կողմից թող կապած են մի մի տախտակ և այս տախտակները, շարժելու, ճօճելու ժամանակ զարկում են միջին տախտակին: Իսկ ճեռը փայտի փոքրիկ գլան է, վրան փորուած ատամներով, որոնց արանքը փոխ առ փոխ ընկնելով փոքր տախտակի ծայրը՝ պտտեցնելու ժամանակ, ձայն է հանում, *ժռռում* է:

Ծագիտարդի օրը պատանի տղայքը, Վաղարշապատում, խումբ խումբ պտտում են տնէտուն, ձեռքներին բռնելով ուռեր, ծալրը օղակացրած, երգում են այս երգը և ժողովում իւրեաց համար ձու:

Անակ անակ ճօճանակ,
Աստծու դուռն բաց անեմ.
Մ'ննեմ մէջը ժամ անեմ.
Դուրս գամ պատարագ անեմ,
Ընկերս ընկաւ ծովը,
Ծովը ծիրանի դառաւ,
Պատերը հալի դառաւ,
Բօգօն եկաւ կեռ կտուց,

Հաւը տեղից թռցրուց.

Տակիցը մի ձու պղցրուց:

Սշտարակ և շրջակայքում եղում են հետեւեալը.

Անակ անակ ճճանակ,

Աստծոյ դուռը բանանք,

Մտնենք ժամ անենք,

Դուռս գանք պատարագ անենք,

Ձալ եզը մորթենք, մատաղ անենք

Պոզերը չարդախ անենք,

Միջին նստենք քեարգահ անենք:

Մատաղը սիրողը երկու ձու տայ,

Զատկին խաղանք քէֆ անենք

Մինն ինձ, մինն իմ ընկերին,

Ով տայ՝ զիգի բարձին նստի,

Ով չտայ՝ չոր քարին նստի:

Ղարսից զաղթած ժողովրդի մէջ՝ Ալէքսանդրապօլում, նոյն Ծաղկաղարդին երեխայքը ճճանակ ածելով պտտում են տնէտուն և ժողովում են Հաւկիթ ու «Հատիկ», որ է խաշած ցորեն, որին երբեմն խառնում են սիսեռ, չամիչ և ալլն և երգում են այս երգը:

Ճրռ ճրռ ճըշեռնակ,

Ասծոյ հալալ պիպեռնակ,

Ընկերս ընկաւ ծովը,

Ծովէն ելաւ ծիրանայ,

Խունկ առէք, մոմ առէք,

Տասներկու պատարագ արէք,

Իմ կարմիր հաւին հաւկիթը դուրս բերէք,

Ով որ բերէ՝ շէն մնայ,

Ով չբերէ՝ հաւի փորին դէմ կենայ:

Դարալագեաղի խաչիկ ղիւղում ծաղկաղարդի պատարաղից յետոյ, պատանինները ճեռ և ճճանակ ածելով շրջում են տները, ձու են ժողովում և երգում են հետեւեալը.

Ճըջանակ, անակ անակ,

Կեղեցոյ դուռը բանանք.

Մննենք մէջը աղօթք անենք,

Դուռ կանք չալ եզը մատաղ անենք,

Պողերը բարդախ անենք,
 Վրէ՛ն պատարագ անենք,
 Հաբուն խրագան անենք:
 Ձալթուկ թակենք տանք հաւերին,
 Հաւերն ինձ մի ձու ձու տայ
 Ձուձուն տանենք տանք պառաւին,
 Պառաւն ինձ մի կաթալ տայ,
 Կաթէն տանենք տանք խառատին,
 Խառատն ինձ մի շիվի տայ,
 Ըիվին տանենք տանք չօբանին,
 Չօբանն ինձ մի դառը տայ:
 Գառը տանենք տանք Ասորճուն,
 Ըստուած ինձ մի աղբէր տայ,
 Աղբեր, աղբեր, ջան աղբեր,
 Դու բերթի գլխին աղբեր,
 Ես բերթի Դակին աղբեր:
 Հուռում հուռում կանչեցինք,
 Հուռումի ձին թամբեցինք
 Հուռումը կնաց բանջարի,
 Բանջար չիլաւ, խոտ իլաւ,
 Խոտի տակին ծիտ ըլաւ:
 Ծըլվըլալէն դուս թուաւ,
 Հանգիստներին լիս ըլաւ:
 Բերէք տուէք մեր երկու ձուն,
 Աստուած պահի ձեր հարսնացուն:

Վէղի Բառարի Դաւալու գիւղում, որոնք զաղթած են
 Մակուից, երեսույքը խմբովին, ձեռներին ուռի ճիւղեր, ծալ-
 րիւր օղակ շինած, պտտում են տնէտտն ձու ժողովելու և
 երգում են:

Կարկաջայ կարինկաջայ,
 Սև եզան սև սամաթեւ:
 Կարմիր եզան օղն ու կօճակ,
 Ով որ չտայ իմ երկու ձուն,
 Մուկն ու կատուն իրանց թթուն,
 Ով որ կտայ իմ երկու ձուն՝
 Աստուած պահէ իր փեսացուն:

Բասնետւմ երեսույքը նոյն ձևով և ուռի ճիւղի օղակնե-
 րով պտտում են և ձու ժողովում ու երգում:

Կարկաչաց կարինկաչաց,
Սև եզան սև սամոզաց
Կարմիր կովին եղն ա մօղա,
Ով որ ինձի հակիթ կտայ
Նստուած իրեն աւելի տայ:

Ջ Ա Տ Ի Կ

Սուրբ Յարութեան կիրակի օրը շատ եկեղեցիների մօտ ժողովուրդը ընդհանուր հասարակութեամբ մատաղ են մորթում և մատաղի միսը բաժանում են հասարակութեան բոլոր անդամներին: Մատաղը շատ տեղ կոչւում է *ախառ*:

Դարալագեազի խաչիկ գիւղում մատաղացու կովի կամ եզան ստամոքսը, որ կոչւում է *թափան*, մեծ յարգանք է վայելում հասարակութեան աչքում: Մատաղ մորթողները իրարից գողանում են թափանը: Չատ անգամ երեցիփոք ինքն է վերցնում նորան իւրեան համար, կամ տալիս է իւր սիրելի մարդուն: Բաղդաւոր է այն տունը, որ այս կամ այն ճանապարհով ձեռք է բերել թափանը: Եթէ նորանից սիրէք (կճուճի բերանացու) շինեն և ծածկեն պղուղի կամ խնոցու բերանը, իսկոյն իւղի քանակութիւնը կըշառանայ և դորա հակառակ ուրիշներինը կըքչանայ:

Որպէս զի այդպիսի զրկանք չլինի գիւղում ոչ ոքի և ոչ ոք էլ ի վնաս միւսների չհարստանայ իւղով, այլ քրիստոնէաբար ամէնքն էլ հաւասար լինին, կարգադրուած է յիշեալ գիւղում, որ թափանը հանեն, խորովեն և հրապարակով ամէնքն էլ ուտեն: Այդպէս են կարգադրել գիւղի խորագէտ և քաջիմաստ մարդիկ:

Հին Զուղայում Զատկի առաւօտ, ժամում հրը սկսում են «Փռք ի բարձունս» իւրաքանչիւր սանահալլ իւր կնքաւորին անպատճառ մատուցանում է 20—30 կարմիր ներկած ձու և մի խաչաձև մոմ կոթը ամբացրած մի ձուի վերայ ու խաչի թւերը վառած: Մոմերի բազմութիւնից գիւղական անշուք եկեղեցին յանկարծ լուսաւորւում է:

Բասենումը մոմ են մատուցանում եկեղեցու մէջ քաւորակին՝ իւր սանամօրը, իսկ սկեսուրը՝ իւր հարսնացուին:

Վաղարշապատի շրջակայքում, Զատիկի կիրակի օրը, տղա-
յոց խումբը պտտուում է տնէ տուն, ձու է ժողովում և երգում
է Հետեհալ երկու երգը.

Ճրագ, ճրագ ճշմարիտ,
Ճշմարտտիկ Մարտիրոս,
Մեր սիրելի Քրիստոս,
Քրիստոս գնաց Հնդու քաղաք,
Բերեց անթառամ ծաղիկ,
Դրեց Մարիամի գլխին.
Մարիամ, Մարիամ, դու կուս ես,
Հոգով մարմնով յուս ես
Էթամ դադեմ բարութիւն
Հոգիս տանես արքայութիւն:

Միւս երգն այս է.

Ճրագ, ճրագ ճշմարիտ,
Ճշմարիտ է Մարգարիտ,
Ննմահական բանալիք,
Տար դրախտի դուռը բաց.
Քալի անթառամ ծաղիկ,
Բեր դիր գլխիս տակ,
Քնեմ քունս տանի,
Վեր կենամ երազս բարի.
Ինչ խնդրեմ՝ Տէրը կատարի.
Երկնքի դուռը բաց ա,
Ոսկէ աթոռը դրած ա,
Քրիստոս վրէն նստած ա,
Ոսկէ գրիչ բռնած ա.
Լուսաւորիչ կանգնած ա.
Մեծ ու պստիկ գրում / ին,
Որդարներն խաղում էին,
Մեղաւորներն լալում էին:

Դարալագեազի պարսկահայ գաղթականների մէջ սովորու-
թիւն է, որ սուրբ Աստուածածնի աւետման առաջին երեկոյին,
չորեքշաբթի, կանանցից ոմանք եկեղեցուց դուրս գալով, բո-
լորովին լուռ և իրարից ծածուկ գնում են մօտակայ առուն,
ջուր են առնում փոքրիկ ամանի մէջ, Հետոն էլ երկու երեք

մանր աւաղ և եթէ կայ՝ ծաղիկ ևս և ամանի բերանը ամուր կապած պահում են և հարկաւոր ժամանակ խառնում են պանրի մային, որ պանիր շատ լինի. ածում են խնոցու մէջ՝ որ իւղը շատ լինի:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

Ահա մի տօն, ոչ ունի բուն ժողովրդական բնաւորութիւն. Քրիստոսի ծննդից մինչև Համբարձում, ինչպէս տեսանք վերև, բոլոր երգերն ու սովորութիւններն ունին բոտ մեծի մասին կրօնական բնաւորութիւն.

Համբարձման տօնը զարմանալի ընդհանրացած է հայ ժողովրդի մէջ և թէպէտ կատարում է Քրիստոսի Համբարձման օրը, բայց տօնակատարութիւնը ամենևին կապ չունի Համբարձման հետ: Հեռու ամէն կրօնական զգացմունքներից՝ ժողովուրդը անձնատուր է սիրոյ զգացումներին, ինչպէս տեսնում ենք «Ջան գիւլումի» մէջ:

Ջան գիւլումի տօնը պատկանում է միայն կոնանց սեւին, նորանք են կատարում ու նորանց երիտասարդ հարսներն ու աղջիկներն են գլխաւոր տօնակատարները: Ելւում է որ «Ջան գիւլում» բանաստեղծութիւնը կանանց հեղինակութիւնն է:

Ջարուրի հայ գիւղերում (Ուլիա, Նորաշէն), Երևանում և այլ տեղեր զատկից մինչև Համբարձումը կանայք երեկոները կար, գործ և սորա նման զբաղմունք չեն կատարում, որպէս զի «Հաւկուր» չլինին: Համբարձման երեկոյին հաւկուրը շրջում են — «Հաւկուրը շուռ են տալիս» — այսինքն վիճակ ձգելու առարկաները (մատանի, դանակ, կօճակ, մատնոց և այլն) որ ջան գիւլումի ծաղիկների հետ միասին լինում են պղուղի մէջ, թափում են մաղի կամ այլ բոց ամանի մէջ և առում այս խօսքերը.

«Հսկա, ըսկա պատին տամ,
Հաւկուրը, շուռ տամ,
Վախում եմ քնեմ քունս տանի,
Ընկորս տանուկ տամ»:

Նոյն Ջալուրի Հայ գիւղերում զատկից մինչև Համբար-
ձում կաթնապուր չեն եփում, որպէս զի կովերի կաթը չպա-
կասի: Բայց Համբարձման կիրակի օրը կաթնապուր եփելը
իւրաքանչիւր տան Համար անհրաժեշտ է:

Համբարձման նախընթաց օրը արդէն պատրաստութիւն են
տեսնում Հարսները և աղջկերքը, որ միւս օրը ջան գիւլումը պատ-
րաստ լինի: Դորս: Համար նորանք քաղում են զանազան ծա-
ղիկներ, դնում են մի պղուղի մէջ, ուր ածում են և աղբիւրի
ջուր: Այդ պղուղի մէջն են դնում նաև վիճակ Հանելի առաք-
կաներ, ով ինչ կամենայ, մատնոց, մատանի, դանակ, ուլունք
և այլն: Ապա աշխատում են որ այնպէս թագցնեն պղուղը,
որ սղալքը չզոլանան:

Ղապախում աղջկները դնում են միասին դաշտ ջան գիւ-
լումը Համար ծաղիկ քաղելու և փնջելու, որի ժամանակ եր-
զում են այս.

Քնացի ծաղկի,
վխցայ մատս ծակի,
Հարսներին քաղել տուի,
Մոնթերին փնջել տուի.
Գորին փայ անել տուի,
Իգրի փալը կտերը,
Ծլվլալայ ծտերը.
Տիւս պի մի թեփշի նուռը,
Որ չզնամ ես խանի դուռը.

Ջալուրի Հայ գիւղերում այդ երեկոյին շատերը աշխա-
տում են փորձել իւրեանց բաղդը «վիճակի ջրի» վերայ: Եր-
կու երիտասարդ Հարս, որոնք ա՛յպայման պէտք է լինին
ծնողաց անդրանիկները, պղուղից ջուր են ածում Ֆինջանի
մէջ, որ կոչւում է վիճակի ջուր և երկու Հարսը ձեռքերի
միայն մեծ (բայթ) մատերի վերայ պահում են Ֆինջանը: Բազդ
փորձողը մատը մօտեցնում կպցնում է Ֆինջանի շրթունքին
ու իւր մտքում մի խորհուրդ է խորհում: Եթէ խորհուրդը
կատարուելու է, Ֆինջանը պտտւում է աջ կողմի վերայ, եթէ
չէ կատարուելու, շրջւում է ձախ կողմի վերայ:

։ետեեալ օրը, այն է Համբարձման օրը Հարսները և աղջիկները միասին գնում են դաշտ, այգի, կամ այլ տեղ, ուր յարմար է, զբօսնում են, ուտում են տարածները, ուրախանում են, երգում, և ապա մի յարմարին տեղում խմբւում են ու սկսում ջան գիւլում երգն ասել մի մի տուն։

Մի փոքրիկ աղջիկ, երեսը անթափանց քողով ծածկած, նստացնում են խմբի մէջ տեղը և վիճակի պղուղը տալիս են ձեռքը, որ Հարկաւոր ժամանակ մատով Հանում է պղուղի միջից մի առարկայ։

Երգիչ Հարսները և աղջիկները երկու խմբի են բաժանւում։ Առաջին խումբը անշուշտ երգ գիտեցողներ, ասում է իսկական երգի խօսքերը, որ կազմում են չորս տող, իսկ միւս խումբը, առաջինից յետոյ, կրկնում է միայն ջան գիւլում ջան, ջան։ Երգի տները, առանց Հետևողութեան ասում են, որը մտներն է ընկնում և ասելուց յետոյ վիճակահան փոքրիկ աղջիկը պղուղի միջից Հանում է ձեռքն ընկած մի առարկայ։ Վերջինը ում պատկանում է, արտասանած երգն էլ, լաւ կամ վատ, նորա տիրոջը կըվերաբերի։

Այժմ յիշատակեմ այն երգերը, որոնք երգւում են դանազան Հայ կնտրօններում։

Շիրակի եւ Բասեն.

1. Ղարսայ բերդը պլել է,
Իմ եարս մէջը քնել է,
Ձէն տուի ձէնս չառաւ,
Մագար ինձէն ջորեր է։
2. Տեղ եմ գցել փոնթ կը տայ
Բարձի տակէն հոտ կգայ
Մեռնեմ դաստայ քոնքուլիդ,
Մէջէն խնկի հոտ կգայ։
3. Իմ եարն եկաւ ու գնաց,
Սարին դէմ առաւ մնաց,
Սրտով իլզար (հաճութիւն) չտուեց
Սրտիս դարդ եղաւ մնաց։
4. Երգիկներ բուն եմ դրել,
Նօրս մօրս քուն եմ դրել,

- Աղջիկ եարիս հաւասից,
Ամեն բան տուն եմ գրել:
5. Աղջի, գնա կայր տես,
Պազ աղբբրին սալը տես.
Պազ աղբբրէն ջուր խմէ՝
Արի սրտիս հալը տես:
6. Ջաղցի դռներ տաշած են,
Ունքեր դալմով քաշած են
Ղալամն ինչ է, թուղթն ինչ է
Լուսնի լուսով նախշած են:
7. Աղջի, կապէ քո ոսկին,
Լեկանջ մի մօրդ խօսքին,
Իլուխս գիր գլխիդ դէմ
Նահլատ տուր հօրդ ազգին:
8. Բոստան եմ ցանէ համեմ,
Խուրմա տուէք որ ծամեմ,
Խուրման առաջ ու պահի,
Կարատ եարիս կը տանեմ:
9. Հաղիր եմ զարկել զարին,
Վաղա եմ կտրի տարին,
Ինձի տուէք էն աղջիկ,
Հքաշէմ ախ ու զարիկ...
10. Ջրի եկար ու գացիր,
Սիրուն երեսդ չքացիր.
Սև աչքերով, վառ թշով
Ինձ էրէցիր, վառեցիր:
11. Բոստան եմ ցանած բազուկ,
Իմ եարն էր քեզմէն նազուկ,
Թէ որ էնոր չէք ճանչէ,
Թե ին ունի բխազուկ (ապարանջան)
12. Ծառ մը ունիմ ծիրանի,
Քամիւն տերև կը տանի.
Տերև ինձմէն արի տար
Իմ եարոջս մատանի:
13. Դալուբարէն ամպել է,
Ձէկ եարը ձին թամբել է.
Հեծի ջրիթ խաղցել է՝
Անձրև էկի թացուել է:

14. Կրակն արա մահանայ,
Արի մեր տուն ու գնայ.
Մէ՛ գամ էլ վրաս աշէ՛,
Դունիան քեզի չի մնայ
15. Ղաշղա քուռակ հեծեր եմ,
Արագին մօտեցեր եմ,
Արագ, Արագ, խան Արագ,
Խաներու սուլթան Արագ:
16. Կողբայ քարերն սղի է,
Մագերդ շաշբաղի է,
Կողբայ միջի մաղանը,
Իմ եար քեզի բաղանը:
17. Ծառի տակը կեցել եմ
Սնթարիս լուացել եմ.
Ծառի տակը երկու դոյ,
Մինը փնչէր, մինը ոյ:
18. Աղջի անունդ Մահի,
Ճակատդ բոլոր շահէ,
Խէ՛ որ ինձի կը հաւնիս,
Ըստուած աղբերդ պահի
19. Այ տղայ եզնարած ես,
Դու ջանէդ բեզարած ես,
Քու հերուայ քլքիւլ լեզուդ,
Էս տարի լալ է դառի:
20. Նախրգնին ուռի ծառ,
Խնձոր գցեմ արի տար.
Ուրբաթ, շաբաթ քեզ մոհլաթ,
Դալ կիրակի արի տար:
21. Ինացի չայ վլածք
Տաշտը կոտրաւ ջուրը գնաց.
Ջուրն առայ ելայ դարը
Չգտայ իմ ֆիղան եարը:
22. Աղջի շամամ ծծերդ.
Թողնես բանամ ծծերդ,
Ինքն իրեն խշխշում է
Սկստակ քալամ ծծերդ:
23. Գնն գնն հետիդ եմ
Ալ խնձոր եմ, գօտիդ եմ,

- Ինձի էստեղ չթողնես,
Ուր տեղ էրթաս մօտիդ եմ:
24. Ջրի միջի ջլախոտ
Ընուշ կգաչ եարոտ հոտ,
Տեղ մը երթաս՝ թէզ դառի,
Սիրոս կեղնի արիւնոտ:
25. Քասմա չափար մի կոխի,
Խօսքը իմս է, մի վախի,
Որտեղ երթաս կուգեմ քեզ,
Տուած խօսքդ մի փոխի:
26. Ջուրը կապել եմ առւունք,
Գրող տանէ պառւերներ,
Դրանք թնչ բանի պետք են՝
Աստուած պահի աղջկներ:
27. Վարդ եմ քաղի մաղերով.
Վեր եմ դրել շաղերով.
Հրէս եկաւ իմ եարը,
Այ ձին տակին խաղալով:
28. Դուն ելել ես կերթաս բեր *)
Ոչ բէրն եղնի, ոչ բէրատէր.
Խէր չտեսնի քո հէրն ու մէր՝
Ինձի չանէր էս դարդին տէր:
29. Կանգնել ես բախաչ բախաչ
Սև չուխա կարմիր եախա,
Քանի դու հեռու մնաս,
Իմ կեանքս ախ ու վախ ա:
30. Ծառի տակը դալդա է,
Քանի կանգնես՝ ֆաչդա է.
Ծառի տակը փորել եմ,
Ոսկիքս մէջը հօրել եմ:
31. Ջուրը կապէ ադէստան,
Աստուած պահէ զեաղեստան,
Գնա, եալէն արտ ունիս,
Հազար ու մի դարդ ունիս:
32. Սիւն ու գերան բար պիտէր,
Սրտով սիրով եար պիտէր:

*) Ոչխար կթելու տեղը:

- Թուխ փռւշին*) վզիս կապող
 ձէկ ու կարմիր եար պիտէր:
33. Երեսալուղդ կարել եմ,
 Դօշիդ կօծակ շարել եմ.
 Երեսալուղ բռնիդ կիսուն
 Կոծակներ հարիւր չիսուն:
34. Ըյս գիշեր ես դուրս ելայ,
 Լուսինն անուշ կըցուայ,
 Կցուայ հալուայ սարին,
 Կկաթէ մառմառ քարին:
35. Լուսինն էր Բագին ոլոր,
 Համ խորոտիկ, Համ բոլոր,
 Լուսնիակ կամար կամար,
 Ես մեռնեմ քեզի համար:
36. Կանանչ կանանչ կանչեցի ք,
 Կանանչ մէջդան բացեցէք,
 Հարսն ու աղջիկ յուրս կզան,
 Պար ու սէյրան բացեցէք:
37. Հաւը թռաւ թառն ելաւ,
 Իմ բանս դաւով ելաւ,
 Սաքաբի որդին մեռնէր
 Դուշմանի սրտով ելաւ:
38. Ըս գիշեր լուսնեակ գիշեր,
 Սև աչքեր կարմիր թշեր,
 Աղջիկ ապրի աղբերդ,
 Դաստուր**) տուր զամ Լս գիշեր
39. Մուղնուայ ջուրը սառն է,
 Մուղնի երթողն իմ եարն է.
 Երթայ իր մուրազն առնէ,
 Դառնայ իր սիրածն առնէ:
40. Մատիդ մատնիք մաւի է,
 Աղջի էդ ինչ դաւի է.
 Սէրն ինչ է, սաւդէն ինչ է,
 Էս պարի զայդէն ինչ է:
41. Կաղզուանի ձորէն եմ,
 Մեծ բաղի խնձորէն եմ,

*) Մետաքսէ թաշկինակ: **) Իրաւունք:

- Դիար դիար կորել եմ՝
Եարոջմէնէն ջորեր եմ:
42. Աղջի անունդ ձուշան,
Որի երթանք սուրբ Նշան,
Թէ որ ինձի խօսք կը տաս՝
Մատանիս տամ քեզ նշան:
43. Կողբայ քարը դօշա է,
Միջի մարդը բօշա է,
Մաշիք տուէք դուրս ելնեմ,
Ինձի չասեն բօշա է:
44. Ղօշա վանքի դշերը,
Մեր քեաբարի շշելը,
Ձիթ ալաջայ քո բընդեր,
Ինձ երեցին քո գնդեր:
45. Կանանչ արտի քեանարը,
Ո՛վ է տեսել իմ եարը,
Արտի քեանարը կանաչ է,
Իմ եարը քեզ ճանանչ է:
46. Գինի դինի գինգստան,
Եար մը ունիմ չնգստան:
Մանր հընլի շարող էր,
Թաւդայ շապիկ կարող էր:
47. Մաճկալը կայնէ մաճին,
Ոսկէ գնդեր անկջին,
Խաբար սարէք գոբանչին,
Որ գայ մեռնի կտրճին:
48. Մեր դրան սուրու զագեր
Իմ եարոջ շէկիկ մագեր,
Իմ եարօջ դեօշի ալը՝
Ինչ կենեմ դունիլի մալը:
49. Ես աղջիկ եմ, ալլու եմ,
Նշանլու եմ, բեալլու եմ,
Երբ որ գացի ան տունը,
Ամենիցն էլ բալլու եմ:
50. Գերի եղայ աչքերուդ,
Կամարակապ ընքերուդ,
Էսէնց անգութ սիրտ ունիս,
Որ չես ճանչնայ ընկերիդ:

51. Իմ եարբ հանդին տեսայ,
Ջրերի բանդին տեսայ,
Օրդակ պիտէր, բադ պիտէր,
Ջրերի զլխին բանդ պիտէր:
52. Առուէ առու եմ թափել,
Քառսուն կաքառ եմ բռնել,
Քառսուն կաքառ միատեղ
Եարիս փեշքաշ եմ դրկել:
53. Խմել եմ խոշ եմ եղի,
Սիրուդ սարխոշ եմ եղի,
Հնդստանու բերէք հունդ,
Իմ եարիս բերէք տուն:
54. Աղջի մագերդ իլվանի,
Քամին թել թել կը տանի,
Էդ քո շող շող երեսդ
Ջուտով հոգիս կհանի:
55. Արտերն ամեն բիար է,
Իմ եար թաժա խիար է,
Արտերն ամեն խճերով՝
Իմ եարը նախշուն բճերով (գուլպա):
56. Ջուր չէր ջրիլ ծառները,
Գիր չէր գրի ձեռները,
Խաբար տարէք նազօին,
Անուշ պահէ գառները:
57. Տարին տասներկու ամիս
Խնձորն է թուռի գօտիս,
Քեաշկա բալուլ մեռնէի
Եւր քո մտքէն չելնէի:
58. Էս օր մութ ու լուս կենէ,
Տանտէր եկէր զուրս կենէ,
Ով որ չիգայ իդա պար՝
Մեռնի իւր եար, կորի ճար:
59. Արևն առի փռուել է,
Այ ֆաս զլխին ճառել է,
Ով որ տունի իմ սիրած՝
Թագը զլխէն չվերած:
60. Արի երթանք մեր վանքը,
Դու քանդեր ես իմ կեանքը,

- Թէ որ խօսքս չը լսես,
Վերջս կեղնի թուանքը:
61. Սարեկները եկել են,
Բերդի բոլոր բռնել են,
Բերդի բոլոր ծիլ ունիմ՝
Եւ աբրեշում թել ունիմ:
62. Արիաչացի հանգերը,
Ջուրը քանդի բանդերը.
Անտէր մնան փոշտերը՝
Եր ու իւրդս քանդել է:
63. Այ արխումը, արխումը,
Դու կայնել ես չարխումը,
Կուլխս գլխիդ ղուրբան,
Ջան մարդ կայնի խալխումը:
64. Ջաղացս ման եմ տուի,
Սիրել եմ ջան եմ տուի,
Ջաղցի քարեր մանրատաշ,
Որտոս եղաւ հալ ու մաշ:
65. Էս օր արեւ պատել է.
Իմ եարն ինձի ատել է,
Եար, կանչէ, ձէնիդ մեռնեմ,
Մեր՝ ինձ ազատել է:
66. Աղբիւր բացի ջուրն անուշ,
Ծաղկներու հոտն անուշ,
Բոբոջիս թալին թաղա
Աղջի, իմ եարը քեզ մաղա:
67. Ջուրը կիջնէր էն սարէն,
Կթափթ փէր էն քարէն,
Չէ սաղցել սրտիս եարէն,
Որ դարձար քո իլդարէն:
68. Երկան քս աղի վերայ,
Շամամս թաղի վերայ,
Կարմիր վարդ, ալ ճաղիկ,
Մանիշակ մաղի վերայ:
69. Արխալուդդ կարել եմ,
Կոճկըները շարել եմ,
Ջան տղայ, գնա՛, կորի՛,
Քեզնից լաւը ճարել եմ:

70. Երևն արի կամփընոց
 Կանփի թուփը երեսնոց,
 Թոն (անձրև) եկել է թռչել է,
 Քանդէ կոճակ, դամ քո ծոց:

Ղազարի Ուզունթալայ գիւղում:

71. Ա տղայ, բեզ ջրումը սէր ընկայ,
 Քարով տուիր, վեր ընկայ,
 Աչքս որ աչքիդ կպաւ,
 Օխտը կոճակ մեր ընկայ:
72. Բազումս կայ մի նռնի,
 Բարձ պիւէք աղէն կռնի,
 Աղայ գլխիդ, արևիդ մատաղ,
 Իմ եարի խոսքը բռնի:
73. Քոչերսը վել հանդեր ա,
 Թուանքդ լիքը բանդեր ա,
 Ա տղայ գնան, շուտ արի,
 Քիթը կալած անդէր ա:
74. Գեանջայ քամին կեալիս ա,
 Դուռը շողշող տալիս ա,
 Աղջի, վեր կաց, դուռը բաց
 Գլխիդ տէրը գալիս ա:
75. Այ տղայ, տղայ, ետ գնան,
 Ուաջովդ գետ գնայ,
 Զիրվանի քամին փշի,
 Գեանջու շալդ ետ գնայ:
76. Նին եմ ուզում, հիւն բերէք,
 Դաղստանայ ձիւն բերէք:
 Էլս, գիւնս թամամ ա,
 Ղարիբ դուշս տուն բերէք:
77. Մեր տան քամակը զարի,
 Աստուած տայ նանիս բարի,
 Որ սրտիս ուզածի պէս
 Ինձ ուզեց նազլու եարի:
78. Ջղացիս դուռը փու ա,
 Քար կզցեմ կխօսայ
 Աստուած սիրող բան չասի,
 Ջան աղջիկ ա, ափսոս ա:

79. Այ տղայ, դու ավին տղայ,
Քեանքիւղ դալին տղայ,
Ես քեզ որ տեղ սիրեցի,
Հերանցս կալին, տղայ:
80. Թող իմ եարս եար ըլի,
Դարդիցս խաբարդար ըլի,
Թեկուղ որ սիրուն չըլի,
Խօսքերը շաքար բար ըլի:
81. Հաց եմ թխել գաթացու,
Իմ եարը մելիքացու,
Մելիք սարերը շուռ գայ,
Բարով իմ եարը տուն գայ:
82. Ալիք եմ աղել կեարի ա,
Իմ եարս սափարի ա,
Նար, քու սափարին մատաղ,
Խօսքերդ շաքարի ա:
83. Դու նստել ես գերանին,
Ոսկէ շվին բերանին,
Ոսկէ դալթան եմ կեօրծել,
Դնեմ ջբիդ բերանին:
84. Գութանս ռաքերումը,
Իմ եարս ձեռքերումը,
Գլուխս դուրբան յտամ,
Մի մանգալ շոքերումը:
85. Ձիրուայ գդալ Ձիրվանի,
Քամին տայ թել թել տանի,
Իմ եարը սարում ձորում,
Իմ քունը հնց կտանի:
86. Մտիկ արէք էն դազին,
Պտպտուրիկ բողազին,
Հոյն էն հօրն աւ մօր ղլխին,
Ողջիկ տուաւ չօլմազին:
87. Այ հեաց հեաց սիրտս,
Ծիրանի թել ա սիրտս,
Ախ, Բնչ ասեմ քեզ, նանի,
Բաց անեմ սև ա սիրտս:
88. Կաղնել ես սըռի հովին,
Քամին տայ գեօշիդ-մովին,

- Էռնակ ծոցիդ քնողին,
Չամամ ծծերդ բռնողին:
89. Գիւռւի զիւլում գլխասար,
Բուրդ եմ մանել հաւասար,
Էռնակ կտամ էն օրին,
Որ եկար հետս խօսար:
90. Մեր բաղումը կանանչի,
Ձե կայ շէի նման չի,
Հարսն ու աղջիկ շատ տեսայ՝
Մինն իմ եարի նման չի:
91. Ղասումը, հայ Ղասումը,
Կարմիր գինին թասումը,
Տղէքը Թրք կ'ուտորուն՝
Վարդիվերի պասումը:
92. Ղասումը, հայ Ղասումը,
Կարմիր գինին թասումը
Ողջկերքը Թրք կտաբանան,
Վարդիվերի պասումը:

Դարալսգեսագի յաշին գիտում:

93. Առ թող ես արել լծի,
Դունջակ ես արել, կծի,
Իմ հէրը քեզ աղջիկ չի տալ,
Քարէն վեր ընկի այրծի:
94. Ջրի ճամբէն սառել ա,
Մաճը բուռը տարել ա,
Կաքաւ պոչիկ թուխ տղայ,
Ուշ ու խելքս տարել ա:
95. Ես մի պնուրիկ տօխ եմ,
Չուշի դալին կկոխեմ,
Ես էն եարին հաւան չեմ,
Ուրիշ եարի կկոխեմ:
96. Ուռի ծառին հով քամի,
Չիրվանիդ քամին տանի,
Ես դու գնանք դատատան,
Ում զամաթն է՝ էն տանի:
97. Ես Ըղէքայ ձորէն եմ,
Ըմալայ խնձորէն եմ,

- Խաբար տարէք իմ նանին,
Իլում իլում կորել եմ:
98. Սարը ձիւնը կալել ա,
Ընձրն արել հալել ա,
Խաբար տարէք իմ նանին,
Սիրտս վարամ կալել ա:
99. Բրկանքն ա աղի վրէն,
Խիարն ա թաղի վրէն
Ես մի թառլան դուշ պտի,
Իմ հօրանց բաղի վրէն:
100. Իմ ճաղիկս քաղած ա,
Տեփրի տակին պահած ա,
Ով որ ճաղիկս դաստ անի,
Հէրն ու մէրը թաղած ա:
101. Ա տղայ, անունդ Ուռուշան,
Սպիտակ կուլիդ թուլս նշան,
Եալլուխդ դարկի նախշեմ,
Ղարկեմ քո եարիդ նշան:

Դարսլազեսզի գաղթական հայերի մէջ, Ազատակ գիւղ:

102. Ոչխարը փռուե դուզը,
Ձոկէք իմ ալագեօզը,
Մէջկէն քաշէք եալլըղը,
Սրփէք երեսի թոզը:
103. Սղբէր ունիմ, աֆչի ի,
Բարակ մէջքը դամի ի,
Ձեռիցը մի բան չի կայ
Լեզուիցը թալանչի ի:
104. Մի ծառ ունեմ ծիրանի,
Քամին թել թել կտանի,
Երես երեսի կառնի,
Ինչ խամեղ քուն կտանի:
105. Եարիս խալաւ կեխտոտի,
Որ կեխտը ջանը չուտի,
Վարդի ջրով լուացի՝
Բերնի գոլով չորցուցի:
106. Կարմիր խնձոր կըծած ի,
Արծթի մէջ բռնած ի:

- Աղբէրս եկաւ չտուիմ,
Նարս եկաւ բաշխեցիմ:
107. Ժամտան ետե խինամ ի,
Խինամը խառնտամ ի,
Ձիւա շապիկ փռամ ի,
Օղակ կօճակ շարամ ի:
108. Գետերն եկաւ. ալաշայ,
Երկու խնձոր մի մէշայ,
Մելիք, տեսէք ով եկաւ,
Եկաւ նարգիզ, բանաւշա (մանուշակ):
109. Աղբէրս ճառի տակը,
Թամբուրան թևի տակը,
Աղբէրս հիւ ի դարձէ,
Լեզուն բլբլիւ ի դարձէ:
110. Լուսնակ ի ամբի տակը,
Ես իմ քո կնդի փակը,
Ես քէ վեարդի սիրացիմ՝
Միտակի քօյի տակը:
111. Սարերը ձնոտիւր ի,
Քեալերը (զոմէշ) քնոտիւր ի,
Աղբէրս բաղի մէջը
Ոտներն ի շաղի մէջը:
112. Նախրի ջաղա խնկի ճառ,
Խնձոր թալեմ եարի տար
Ուրբաթ շաբաթ քէ մօլաթ,
Լոս կիրակի եարի տար:
113. Ամբեր է ձիւն չի գալի,
Իմ եարը տուն չի գալի,
Գլոխս դրի բարձը,
Ըչքերս քուն չի գալի:
114. Իմ խօր տախտըշէն տախտ ի,
Գարուն կիկայ կճաղկի,
Ուշուկ վիմ աղբօր իկեալը
Կանանչ վարդեր կթաղկի:
115. Բաղի երզը զամիշ ի,
Մէջը լինքը եմիշ ի,
Նղջիկ. խաթրդ չի մնայ
Նազուկ քեանց քէ անուշ ի:

116. Տնիսի վրայ քնող լան,
Բէլխարար քնող լան,
Տարան քո նշանցուդ՝
Եւ վխարար քնող լան:
117. Տղայ, տղայ, խաս տղայ,
Աղջկանց ետեւէն վազ, տղայ,
Այա չեսնա (չես կարող) կոխել
Խոնջանլու կռի, տղայ:

ՎԱՐԴԱՎԱՐՈՒ.

Ղաղախի Ուզունթալա դիւղում վարդավառի կախորանց բառառով «վրժիվիր»-ի օրը հարսները և աղջիկները դնում են զրօսնելու իւրեանց բարձրագիւր ամարանոցում, Դամբլուտի սարում, ճլորժի են խաղում և այլն: Գիւղի հասարակութեան մի մասը, միւս գիւղերի բնակիչների հետ, մատաղներով դնում է գիւղից երեք վերստ հեռաւորութեամբ, անտառի մէջ մի բարձր ժայռի գլխին կանգնած «Սրուէղ» անուն վանքը՝ ուխտի:

Տաւարածները Դամբլուտի սարում այդ օրը ծաղիկ են քաղում դոյնզդոյն, փնջում են խաչածե և կապում են իւրաքանչիւր տան մի կէտն կովի ճակատին մի ծաղկախաչ: Գեղեցիկ տեսարան է երբ ճակատները զարդարուն կովերը հպարտ քայլերով լաւաջ են դնում դէպի իւրեանց տիրոջ վրանները, և նորանց ընդառաջ են դուրս գալի գիւղիս երեխայքը և երգում են հետեւեալը:

Ական, ական, ական ի կովին,
Չալ չալ աչքեր բախրի (եղջերու) կովին,
Ես քէ մատաղ, Սուրբ Ուհանէս,
Ոմէն բիւզիւ (երեկոյ) իմն ըկանես,
Մատաղ անեմ զարուկ կանես,
Քօւլուղինը քարնըր անես՝
Իմն աղաքսըր անես:

ձամախի դաւառի հայ գիւղերում, օրինակ Գիրդա, Հրնդար, Գիւրջուան և այլն, այդ օրը աղջիկունք ժողովում են

Ծաղիկ, փնջիկներ են շինում նորանից և այդ ծաղիկը կոչում է նորանցում Համբարձում, և փոքր աղջկայ ձեռքով բաժանում են դիւղի տներին և փոխարէն ստանում են իւղ, ձուրբիւնձ և այլ ուտելիքէն:

Այս հաւաքում են դաշտ, ընկոյզի ծառերի տակ, գրօսում են, երգում են, զուռնայով պարում են, ժողոված յուտելիքէնը վայելում են, որոնց մասնակցում են և հասակակից տղալք:

ԸՆՑԱՆԵԿԱՆ ԿԵՆՔ ԵՒ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՐՍԱՆԻՔ.

Ահա մի հանդէս, որ կատարում է մեծ շքեղութեամբ և ուրիշ գիւղերում մասնակցում են ոչ միայն հարսի ու փեսայի ազգականները, այլ և ամբողջ հասարակութեան անդամները: Պարսկահայ և Տաճկահայ գաղթականների մէջ մեծ շքեղութեամբ է կատարում այս հանդէսը:

Ինչպէս յայտնի է, ամենից առաջ կատարում է նշանադրութիւնը: Սովորաբար տղայի ծնողները և ազգականները որոնում են յարմար հօրսնացու լաւ գերդաստանից, ձիրակում, Քասեում և Կարսում աղջկայ հայրը եթէ իւր աղջիկը հարսութեան տալու նպատակ ունի՝ պատասխանում է «Ժամանակդ կրկնէ, մինչև մեր տանը խորհուրդ կանենք», իսկ եթէ տալու միտք չունի, պատասխանում է, «կորուստդ մեր տանը չէ, դամաթդ Աստուծոյ ուզէ»:

Պատահում է որ հայրը կամենալով իւր աղջիկը հարսնութեան տալ օտար գիւղ, կանխօրէն վերաստուգում է տղայի կարողութիւնը, տունը, գոմն, ապրանքը, ապրուստը և այլն: Վերաստուգելուց յետոյ համաձայնում է նստել, բարեկամանալ, հիւրասիրուել և ստանալ փեսայի ծնողներից ընդայ, մահուդ, ձի, ատրճաճակ կամ մի այլ պարգև, որ երբեմն նորից վերադարձնում է իւր փեսային, համբուրելով, նորա Լիւսը: Այս ընծան կոչում է տնտեսութեան խալաթ (տուն տեսնելու)